ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Ներածություն: Հոդվածի նպատակն է վեր հանել տարիների ընթացքում կուտակված և տեսանելի հորիզոնում լուծումներ պահանջող հիմնախնդիրները (մեգախնդիրներ)[1] ու առանձին դեպքերում առաջադրել լուծումներ[2]: Մեգախնդիրների հանգուցալուծման վերաբերյալ որոշումներ կայացնելու առաջարկությունները միտված են լինելու տնտեսության զորացմանը, իսկ դրանց ախտորոշումը կատարվելու է հեղափոխական զարգացման բարձր, բայց միևնույն ժամանակ հասանելի նշաձողերի նախանշման ու հաղթահարման որոնումներում, որքան էլ դրանք ներկայացված լինեն ռիսկային ու անորոշ:

Երկրի առջև ծառացած մեգախնդիրների հաղթահարման բավարար լուծումների առաջադրման ու կենսագործման դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել ***երկարատև ու կայուն տնտեսական զարգացում***: Դրանով, ի դեպ, առաջին մոտեցմամբ, կարելի է բնորոշել ***տնտեսական հեղափոխության էությունը***:

Տնտեսական հեղափոխության էությունը նույնիսկ մասնագիտական շրջանակներում, ոչ բարեբախտաբար, երբեմն պարզունակ ձևով հանգեցվում է արագ սննդի (Fast food) ռեժիմով գործելակերպի՝ մոռացության տալով, որ տնտեսությունը նախևառաջ իներցիոն համակարգ է, որին իրերի բերումով կարելի է հաղորդել թռիչքաձև, բեկումնային զարգացման ընթացք կամ էլ անվանել տնտեսական հրաշք: Տնտեսության ընթացքը հեղափոխական անվանելը նշանակում է, որ այդ համակարգի կառավարման ու կարգավորման գործընթացի հիմքում «տեղադրված» են հեղափոխական, խորքային և արմատական լուծումներ պահանջող օրենքներ, գործուն են իրականացման ենթակա բարեփոխումները կյանքի կոչող ինստիտուտները, բարելավվում են մարդկանց վարքաբանական ու արժեհամակարգային նորմերը: Մասնավորաբար, հարկային բարեփոխումներն ակնհայտորեն միտված պետք է

[1] «Մեգախնդիր» եզրը վկայում է հիմնահարցի մակրո, մասշտաբային, համընդգրկուն բնույթի մասին: Խնդիր է, երբ տանն ես՝ սոված, դատարկ սառնարանի ընկերակցությամբ, կամ քաղաքում՝ դատարկ դրամապանակով: Լուծումները գտնվում են: Ինչպես ասվում է՝ չկան չլուծվող խնդիրներ, կան դժվար լուծվողներ: Նմանատիպ խնդիրներ (մեգախնդիրներ) ձևավորվում են հասարակության մասշտաբով:

[2] Լուծումների առաջադրումը կարող է ներառել, դիցուք, «Ի՞նչ չի կարելի անել»-ը նույնպես:

լինեն իրական եկամուտների բացահայտմանը և դրանց հարկման լավագույն սանդղակի որոշմանը:

Այս տեսանկյունից տնտեսական հեղափոխության իրատեսության մասին բոլոր հոռետեսական գնահատականները քաղաքական հեղափոխությունից հետո սին են, քանզի դրան պետք է անմիջապես հաջորդի տնտեսական հեղափոխության գաղափարական հիմքերի ձևավորման գործընթացը: Այդ առումով կարևորագույնը մաքուր ընտրություններով օրենսդիր և գործադիր լեգիտիմ իշխանությունների ձևավորումն է, ինչպես նաև սահմանադրական փոփոխությունների շրջանակներում դատական իշխանության արմատական վերափոխումները:

Տնտեսական հեղափոխությունը, լինելով մարդկային գործունեության թռիչքաձև զարգացման համաշխարհային գործընթաց, առաջատար տնտեսություններ ունեցող և դրան ձգտող պետությունների առումով կոնկրետ երկրում անցել է ուրույն ուղի:

Տնտեսական հեղափոխության հասկացութային ապարատի ակունքները և ընկալումները սկիզբ են առել դեռևս նեոլիթի ժամանակաշրջանից (Քրիստոսից առաջ XI-VI հազարամյակ), երբ երկրագործության և անասնապահության ասպարեզներում տեղի ունեցան հեղափոխական փոփոխություններ: Հետագայում մարդկային գործունեության տարբեր և առաջին հերթին արդյունաբերության ոլորտներում փոփոխություններն ըստ էության հեղափոխական էին: Ժամանակակից պայմաններում ***տեխնոլոգիական և կառուցվածքային խորը ռեֆորմացիան ինքնին կարող է դառնալ համընդգրկուն տնտեսական հեղափոխության հիմք:***

Տնտեսական հեղափոխության օրակարգը: Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հեղափոխություն իրականացնելու գաղափարական հիմքերը ձևավորելու համար, մեր կարծիքով, պետք է առաջնորդվել գիտագործնական հետևյալ օրակարգով.

1. Որոշակի ժամանակահատվածի համար (15-20 տարի) միջնաժամկետ հատվածների կտրվածքով՝ կանխատեսումային ու ծրագրային տնտեսամաթեմատիկական մոդելի մշակում: Այն պետք է ներառի զարգացման սցենարներ՝ հնարավոր ռիսկերի գնահատմամբ (պատերազմական գործողությունների պարագայում՝ համապարփակ-մասնակի շրջափակման իրավիճակից մինչև դիրքավորումը լիարժեք խաչմերուկային իրավիճակում), և մակրոտնտեսական ցուցանիշների հաշվեկշռված համակարգ՝ տնտեսության իրական, ֆինանսական, սոցիալական, արտաքին հատվածների վերաբերյալ համապատասխան մակրոբնութագրերով հիմնական իրավատնտեսական կարգավորումների վերաբերյալ առաջադրանքների ամրագրմամբ:

2. Զարգացման հեղափոխական սցենարը պետք է ընդունել որպես նպատակային հենակետ, որը տարանջատվում է իներցիոն, արա-

գացված, բեկումնային, թռիչքաձև և հնարավոր այլ սցենարներից՝ հստակ սահմանելով հեղափոխականության չափանիշներն ու չափորոշիչները: Պարտադիր չէ «ոտքերը վերմակի չափով մեկնելու» բանաձևի կիրարկումը, որն էլ օրակարգի ձևավորման մեթոդաբանական առանձնահատկություններից մեկն է: Զարգացման՝ նշված իմաստով հեղափոխական-նպատակային սցենարի համար, վերջնարդյունքի տրամաբանությանը համապատասխան, հաշվարկվում-գնահատվում են Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, անվտանգային հիմնական ցուցանիշները:

3. Զարգացման հեղափոխական-նպատակային սցենարի գործարկում, որտեղ պետք է մեկտեղվեն հետևյալ խնդիրները.

ա) **Պետություն-շուկա արդյունավետ փոխգործակցում**: Մնալով հավատարիմ կատարյալին մոտ մրցակցության ձևավորման վրա խարսխված իրական ազատական տնտեսակարգի արժեքներին՝ միաժամանակ չպետք է թերագնահատվի պետական միջամտությամբ որոշումների կայացման նորովի մոտեցումների կենսագործումը բոլոր մակարդակներում ու ոլորտներում՝ հատուկ դերակատարում ստանձնելով ***աշխատանքի և կապիտալի շուկաներին առնչվող հարաբերությունների կարգավորման և հիմնախնդիրների լուծման հարցերում:*** Այստեղ, բնականաբար, հիմնական ուշադրությունը պետք է սևեռվի աշխատատեղերի և ներդրումային հոսքերի հիմնախնդիրների լուծման վրա:

բ) **Ռեսուրսաապահովություն:** Զարգացման սցենարի հիմնական ցուցանիշների՝ որպես աճի խթանիչների հաշվեկշռված համակարգ-ը պետք է պարունակի արդյունավետ օգտագործման բնութագրեր մարդկային, նյութական, էներգետիկ (գազ, էլեկտրաէներգիա, ոչ ավանդական էներգաաղբյուրներ, ջրային ռեսուրսներ), ֆինանսական, տեխնոլոգիական նորարարությունների և այլ ռեսուրսների մասին:

Աշխատանքի շուկա: Աշխատաշուկայում փոփոխությունները պայմանավորված են սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, բնապահպանական և տեխնոլոգիական խոշորացված գործոնների համախմբով: Կառուցվածքային փոփոխությունների և առկա միտումների մասին պատկերացումները թույլ են տալիս դատել պահանջարկի փոփոխման պատճառների, ռազմավարական վերափոխման օրակարգի և այս ազդեցություններով պայմանավորված տնտեսական աճի խթանման մասին[3]:

[3] Տե՛ս «Հայաստանի ազգային մրցունակության զեկույց՝ 2019: Աշխատատեղերի ապագան Հայաստանում» www.evconsulting.com: Այս հետազոտությունը լայնորեն ու խորությամբ լուսաբանում է խնդրո առարկա հիմնախնդիրները: Կանխատեսելով տեխնոլոգիաներով պայմանավորված գործազրկության ռիսկերի ահագնացման վտանգը՝ վկայակոչվում է փորձը, ըստ որի՝ մեղմումը կարող է իրականացվել ունիվերսալ բազային եկամտի ֆինանսավորմամբ: Միաժամանակ շեշտվում է, որ բարեփոխումների արմատական լուծումները մարդկային կապիտալում խոշորամասշտաբ ներդրումներն են:

Աշխատաշուկայում, ըստ էության, ռազմավարական վերափոխումների օրակարգ ձևավորող ***զբաղվածության մակարդակի և աշխատանքի արտադրողականության բարձրացմանն*** ուղղված մարտահրավերները երկմիասնական են: Այդ իսկ պատճառով տնտեսական աճի բարձր ու կայուն տեմպեր ապահովելու համար անհրաժեշտ է կազմակերպել դրանց հավասարակշռված և համակարգված դիմակայում:

ՀՀ-ում գործազրկության մակարդակը 2017-ին 17,8% ցուցանիշով ամենաբարձրն է եղել ԱՊՀ և Բալթյան երկրների շարքում (միջին մակարդակը՝ 7,3%): Այս պայմաններում աշխատատեղերի զանգվածային կրճատումը լուրջ մարտահրավեր է, ինչը տեղին մտահոգություններ է առաջացնում: Այդ առումով հետազոտության հեղինակային խումբը իրավացիորեն (այդուհանդերձ) լուծումները տեսնում է ***մրցունակ աշխատուժի ձևավորման մեջ***: Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերությունը (տվյալագիտություն, արհեստական բանականություն, տնտեսության թվայնացում և այլ գործիքներ) «մարդ-մեքենա» հարաբերություններում փոխադարձ փոխարինման ու փոխլրացման արդյունքում կպահանջեն մեծածավալ ներդրումներ մարդկային կապիտալում՝ նպաստելով մրցունակ աշխատուժի ձևավորմանը, աշխատատեղերի պահանջներին մարդկանց հարմարվողականության իրականացմանը[4]: Նոր և անցանկալի առանձնահատկություն է, որ 2017 թ. տվյալներով, բարձրագույն կրթությամբ մասնագետների ներգրավվածության մակարդակը ՀՀ-ում ցածր է ԵԱՏՄ գործընկեր և զարգացած տնտեսություն ունեցող երկրների համեմատ:

Պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ 2017 թ. շուրջ 560 հազար մարդ համալրում են չօգտագործված աշխատանքային ներուժը (զբաղվածների 55%-ը) և չեն մասնակցում մեր երկրում ավելացված արժեքի ստեղծմանը: Չօգտագործված ներուժի համակազմում շուրջ 250 հազար մարդ մեկնում է արտագնա աշխատանքի, մնացածը գործա- և հուսազուրկներն են: Պետք է նկատել, որ աշխատաշուկայում զբաղվածության կրճատումը լրացուցիչ խոչընդոտ է ներառական աճի ապահովման հարցում:

Զարգացման հեղափոխական-նպատակային սցենարի գործարկման գաղափարական ու արժեհամակարգային ապահովումը տնտեսական հեղափոխության օրակարգի նախորդ քայլերի իրագործման հիմանարար նախապայման է: Այդ առումով առաջնահերթ են վերափոխումները հետևյալ ոլորտներում.

- ✓ օրենսդրական,
- ✓ ինստիտուցիոնալ,
- ✓ վարքագծային:

---

[4] «Տնտեսության թվայնացման» և նոր տեխնոլոգիական միջավայրի ստեղծման գործիքը էապես բարձրացնում է ընկերությունների մրցունակությունը, նպաստում է ծախսերի օպտիմալացմանը, մեծացնում է ակտիվների եկամտաբերությունը, լավագույնս գնահատում է սպառողների պահանջարկը:

Կապիտալի շուկա: Հայաստանի տնտեսության ֆինանսական հատվածում կապիտալի շուկայի զարգացմանն ուղղված քայլերը, փաստորեն, անպտուղ են եղել: Կան առանձին բացառություններ. ՀՀ ֆոնդային բորսան իր կայքում հրապարակում է ամսական տվյալներ կարգավորվող շուկայում և դրանից դուրս կատարված գործարքների ծավալների մասին[5], հասանելի է պետական գանձապետական պարտատոմսերի գնման և հետգնման օնլայն հարթակը[6] և այլն: Բայց սրանք չեն բորսան բորսա դարձնում:

Կապիտալի շուկայի խնդիրների ոչ բավարար լուծումները պայմանավորված են երկրում ունեցվածքի բաժնետիրացման ու բաժնեմասնակցային գործընթացներում «նեղ տեղերի» չբացահայտմամբ, կամ եթե դրանք հայտնաբերված են, ապա դեռևս հաղթահարված չեն: Այսպիսի իրավիճակ է արդեն քառորդ դար, որի շարունակականությունը վտանգավոր է, և գործուն քայլեր չձեռնարկելու դեպքում այն կարող է դառնալ տնտեսական հեղափոխության հաջող ընթացքն արգելափակող գործոն:

Անհրաժեշտ է արձանագրել, որ խափանված է կապիտալի շուկայի հիմնարար բաղադրիչի՝ արժեթղթերի շուկայի արդյունավետ գործառնումը: Պնդումը միանգամայն տեղին է հատկապես արժեթղթերի երկրորդային շուկայի մասով:

Կարգավորվող շուկայում արժեթղթերի երկու երրորդը կորպորատիվ, իսկ 26 տոկոսը պետական պարտատոմսեր են: Արժեթղթերի միայն 8 տոկոսն են բաժնետոմսեր: Թվերն ինքնին խոսում են այդ կառուցվածքի ցածր արդյունավետության մասին: Բնականաբար, այն չի կարող լինել տնտեսական ակտիվությանը նպատող հիմնական գործոն: Մեր կարծիքով, արդյունավետ կապիտալի շուկայի գործառնումը պետք է իրագործվի «տնտեսական ժողովրդավարության» հաստատմամբ, ինչը ներդրումային բազմահարթակ ֆոնդերի տեսանկյունից կդառնա սնուցման գործուն աղբյուր: Հայաստանի սուվերեն ֆոնդի համար շահառու համակազմի համալրումը կարող է իրագործվել նաև աշխատակիցներին բաժնետիրացման լայն հնարավորություններ ընձեռելով[7]:

Կապիտալի շուկայում մինչև կարգավորման քաղաքականության խնդիրների դիտարկումը առաջնային պետք է դարձնել շուկայի արդյունավետությանն ուղղված ցուցանիշների նախանշումն ու գործադրումը: Շուկայում արդյունավետության առանցքային ցուցիչների (KPI Key Performance Indicator) կազմը կարող է ձևավորվել բաժնետոմսերի ու պարտատոմսերի եկամտաբերության և դրանց շրջանառության հարա-

---

[5] https://amx.am/am/9/trading/13/monthly-bulletins

[6] https://gp.minfin.am:9443/minfin/home.cmd

[7] Ներդրումային ֆոնդերի ձևավորման ու գործառնման մոտեցումները մշակել է «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամը (հոգաբարձուների խորհրդի նախագահ, տ.գ.թ. Տ. Ս. Կարապետյան):

բերական բնութագրիչներով։ Առաջին մոտարկմամբ այդպիսի կազմ ձևավորելու համար կարելի է առաջնորդվել հետևյալ բնութագրիչներով.

- ✓ կապիտալացում/ՀՆԱ,
- ✓ բաժնետոմսերի շրջանառություն/կապիտալացում,
- ✓ պարտատոմսերի շրջանառություն/թողարկման ծավալ,
- ✓ այլ ֆինանսական գործիքներ։

Ցուցչակազմի ճշգրտումն ու լրացումը, անշուշտ, պայմանավորված կլինեն տվյալ ժամանակահատվածում շուկայում կարգավորում ենթադրող խնդիրների սրությամբ։

Կապիտալի շուկայի արդյունավետության տեսանկյունից առանձնապես կարևոր է ***ներդրողների պաշտպանության հարցը:*** Ակնհայտ է, որ պաշտպանության երաշխիքը չի կարող լինել գործարքի կատարման մասին բարձրաստիճան պաշտոնյայի ձեռքսեղմումը։ Մեր իրականացրած հետազոտությունները ցույց են տալիս, որ հետխորհրդային տարածքի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրներում սահմանադրականության մակարդակի գնահատման նպատակով ընտրված ցուցչակազմից «սեփականության իրավունքի» ինդեքսն ունեցել է ամենամեծ բացասական խզումն առավել բարձր սահմանադրականությամբ բնորոշվող երկրների միջին ցուցանիշից[8]։ Ի դեպ, սեփականության իրավունքի հետ մեկտեղ այդ խզումը գեներացրել ու ամբողջացրել են «իրավունքի գերակայության» և «ընտրական գործընթացներ» ցուցիչները։

Կապիտալի շուկայի արդյունավետության կարևոր խնդիրներից է դրա կարգավորման և կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունների տարանջատումը։ Այսօր այն հստակ չէ, և ներդրողների պաշտպանության խնդիրը դեռևս բավարար լուծում չի ստացել ինչպես օրենսդրության կատարելագործման, այնպես էլ ներազդման այլ գործուն միջոցների կիրարկման առումով։ Ավելին, ոչ բաժնետիրոջ նախաձեռնությամբ սեփականության իրավունքից զրկելու պրակտիկան դեռևս շարունակվում է։ Այս և նմանատիպ այլ գործընթացները չեն նպաստում ներդրումներ կատարելու վստահության մակարդակի բարձրացմանը և Doing Business-ի ցուցանիշների բարելավմանը։ Կառավարության՝ որպես թողարկողի մասնակցությունը կապիտալի շուկայում պետք է ուղղված լինի իրացվելիության մակարդակի բարձրացմանը, տոկոսադրույքների ռիսկերի հեջավորմանը, կառուցակարգերի մշակմանն ու ներդրման, ինչպես նաև կապիտալի շուկա թողարկումների մուտքի խթանմանը։

Օրենսդրական ինստիտուցիոնալացում: Մեր կարծիքով, առաջիկայում ՀՀ իշխանությունների օրակարգային խնդիրներից են հետևյալ առաջնահերթ քայլերը.

---

[8] Տե՛ս **Саргсян Г.** Некоторые подходы к разборке инструментария и методов реализации конституциональной диагностики // Альманах «Нжар», Ер., 2016, էջ 91:

- արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո սահմանադրական բարեփոխումներ,
- երկրում թռիչքաձև, երկարատև ու կայուն տնտեսական զարգացմանը միտված համակարգված գործողություններ[9]:

Հայաստանում տնտեսական հեղափոխության բովանդակային մեկնության գաղափարական հենքը ներկայացված է վերոհիշյալ ուսումնասիրությունում, որտեղ պետության կայացվածության աստիճանը և սահմանադրականության մակարդակը դիտարկվում են որպես համարժեք իրողություններ, ինչը ենթադրում է մայր օրենքում և այլ իրավական ակտերում ամրագրված սկզբունքների, կանոնների և նորմերի՝ կյանքում իրացման գործընթացի մշտադիտարկում և գնահատում: Հայտնի է, որ դրանց ոչ պատշաճ իրականացման հետևանքով առաջացած սահմանադրականության դեֆիցիտը հանգեցնում է մարդկանց վստահության և լավատեսության կորստի, անտարբերության և հուսահատության: Դրա վկայությունն են մեր երկրում երկու տարի առաջ տեղի ունեցած հասարակության ընդվզումը և քաղաքական հեղափոխությունը:

Գիտակցելով տնտեսական հողափոխության կարևորությունը՝ գտնում ենք, որ կառավարության «ռադարային էկրանին» մշտապես պետք է լինեն սահմանադրականության բնութագրիչները: Վերջիններիս վերլուծությամբ բացահայտված հիմնախնդիրները լուծելու նպատակով իրականացվել են համակողմանի ուսումնասիրություններ[10]: Դրանց արդյունքում մշակված մեթոդիկայով[11] սահմանադրականության մակարդակի ախտորոշումը կատարվել է նախկին ԽՍՀՄ-ի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի անցումային 29 երկրների տնտեսությունների ուսումնասիրության հիման վրա, և իրականացվել է քլաստերացում: Քլաստերացման համատեքստում առավել մեծ կարևորություն են տրվել ժողովրդավարական և ինստիտուցիոնալ[12],

---

[9] Տե՛ս «Ի՞նչ անել: Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները: Գիտագործնական խորհրդաժողով»: Անտարես, Եր., 2018, էջ 9:

[10] Տե՛ս մասնավորապես «Տնտեսական աճի գաղտնիքը թաքնված է Սահմանադրականության մեջ», http://b4b.am/archives/news, 28.07.2017, «Մեկնարկից տնտեսական վերելք տանող ճանապարհները», http://armtimes.com/hy/article/139508, 19.06.2018, «Հայաստանում պատշաճ կենսամակարդակ կլինի, եթե լավ ընտրություններ և լավ ԱԺ ունենանք», http://www.fin.am/2252897.html, 28.11.2017:

[11] Տե՛ս **G. Harutyunyan, H.Sargsyan, R.Gevorgyan,** Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies, Journal of Advanced Research in Law and Economics, Volume VIII, Issue 4 (26), 2017.

[12] Ժողովրդավարական և ինստիտուցիոնալ զարգացումների բնութագրիչները, որոնք «զտվել են» ավելի ընդգրկուն ցուցչակազմից, հետևյալն են՝ քաղաքացիական հասարակություն, քաղաքական բազմակարծություն, խոսքի ազատություն, կազմակերպությունների իրավունք, ընտրական գործընթացներ, դավանանքի ազատություն, անհատական ինքնավարություն, անկախ մեդիա, կառավարության գործունեության արդյունավետություն, ունեցվածքի իրավունք, կոռուպցիայի ընկալման համաթիվ, իրավունքի գերակայություն և կարգավորման որակ:

այնուհետև մարդկային կապիտալի զարգացման, ինչպես նաև քաղաքական կայունության ապահովման գործոններին: Մեկ այլ ուսումնասիրությունում,[13] որտեղ օգտագործվել է փոփոխականների այլ խումբ, ստացվել են գրեթե համանման արդյունքներ, ինչը վկայում է մշակված մոտեցման հավաստիության մասին:

Գծապատկեր 1

Գործոնների վարկանիշային գնահատականները



Սոցիալ-տնտեսական ցուցիչների բարելավման նպատակադրումը, ինչպես նաև իրագործումը մեծ մասամբ սահմանափակված են ինստիտուտների, ժողովրդավարական գործընթացների անբավարար զարգացածության պատճառով: Երկրում սահմանադրականության մակարդակի բարելավման ուղղությամբ քաղաքականություն վարելու տեսանկյունից տվյալ հետևությունը այս հետազոտության առավել կարևոր արդյունքներից է: Որպես վարկած կարելի է ենթադրել, որ անցումային երկրներում տնտեսության հետագա վերելքը, որն այլևս «վերականգնվող» չէ, մեծապես պետք է կանխորոշվի ժողովրդավարական և ինստիտուցիոնալ բարեփոխումներով:

Երկրներում սահմանադրականացման գործընթացները պահանջում են փոխկապակցված բազմաբնույթ խնդիրների համատեղ (ցանցային) լուծումներ: Դրանք անհրաժեշտ է դիտարկել որոշակի ցուցիչների (ինդիկատորների) համախմբով, համաշխարհային զարգացման օրինաչափությունների վերադրմամբ: Ակնհայտ է, որ առանց պատշաճ գիտական սպասարկման և հիմնավորման չեն կարող ակնկալվել լուրջ արդյունքներ: Ի վերջո, պատճառահետևանքային կապերի հանգույցում պետք է բացահայտվեն առաջընթացի խոչընդոտներն ու խթանիչները, դրանց դիրքավորումները և մշակվեն իրավատնտեսական կար-

[13] Տե՛ս **Գ. Հարությունյան, Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան,** Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ, Եր., Զանգակ հրատ., 2017:

գավորումների գործուն մեխանիզմներ:

Հետազոտությունում իրականացված էմպիրիկ վերլուծությունների արդյունքները վկայում են, *որ կարևոր նշանակություն կարող են ունենալ մարդկանց վարքագծային նախադրյալները, ինստիտուտների ընկալումը, սահմանադրական ավանդույթներն ու սահմանադրական կայունությունը:* Այսպիսով, ընդհանրական հետևությունն այն է, որ սոցիալական և տնտեսական առաջընթաց հնարավոր է երաշխավորել բացառապես սահմանադրականության դեֆիցիտի հնարավորինս կրճատմանը համընթաց[14]:

Վարքագծային վերափոխումներ: Սահմանադրական և օրենսդրական լուծումների ինստիտուցիոնալացմանը միտված գործողություններից զատ՝ տնտեսական հեղափոխության նպատակային սցենարի իրագործման համար անհրաժեշտ է արձանագրել հայտնի իրավիճակներ, որոնք պատճառ են դարձել հեղափոխական փոփոխությունների, և որոնց հաղթահարումը պահանջում է որոշակի ժամանակ: Մասնավորաբար.

✓ 2018 թվականի հեղափոխական իրադարձությունները չհանգեցրին և չէին էլ կարող հանգեցնել տարբեր և հատկապես սոցիալական բնույթի խնդիրների լուծման համար անհրաժեշտ ցանկալի որոշումների ընդունման: Բազմաթիվ սուբյեկտիվ մոտեցումների ու կարծրատիպերի պայմաններում տնտեսական էլիտաները, հարմարվելով քաղաքական նոր համակարգին, ձգտում են վերջինս հարմարեցնել իրենց նպատակներին: Ակնհայտ է, որ նման պայմաններում լուծումների վեկտորը պետք է ունենա բացառապես իրավական ուղղվածություն:

✓ Բարեփոխումների հաջող ելք ապահովելու համար անհրաժեշտ են քաղաքական, տնտեսական ու արժեհամակարգային հնարավորինս միաժամանակյա փոփոխություններ: Կարևոր նախապայման է նաև ինստիտուցիոնալ սահմանափակումների և պարտադրանքի մեխանիզմի համադրության սկզբունքի արդյունավետ կիրառումը: Կառավարության ամենօրյա աշխատանքների և երկարաժամկետ ռեֆորմների իրականացման գործընթացում կարող են լինել նաև հակասություններ, որոնց մեղմման նպատակով շատ երկրներում ստեղծվում են մշտադիտարկման և խորհրդատվական գործառույթներով օժտված փորձագիտական խմբեր:

Վերջաբանի փոխարեն: Տնտեսական հեղափոխության իրագործման համատեքստում երկրի ու ազգի զարգացման տեսլականը պետք է

[14] Պատրանքներից զերծ մնանք, որ իրավունքի գերակայության ու կայուն զարգացման, հակակշիռների ու զսպող մեխանիզմների ցուցիչների բարելավումը կընթանա շատ արագ, և կփոխվի մեր մտածողությունը: Հետևողական ու անշրջելի բարեփոխումները կնպաստեն արդարության հասնելուն և կոռուպցիան իսպառ արմատախիլ անելուն:

խարսխվի երկարաժամկետ ռազմավարության վրա՝ նախանշելով ապագայի հիմնական կողմնորոշիչները: Հիմնախնդրի լուծման համար, մեր կարծիքով, պետք է առաջնորդվել հետևյալ մոտեցումներով.

1. Շուկայական կառուցակարգերի լիարժեք ու արդյունավետ գործունեությունը և հասարակության բարեկեցությունը խոչընդոտող առանցքային գործոնը ***սահմանադրականության դեֆիցիտն է***, որի հաղթահարումը հնարավոր է գնահատման (ախտորոշման), մշտադիտարկման և կառավարման խնդիրների համալիր լուծման դեպքում: Ընդ որում, լուծումները պետք է ենթադրեն ինչպես օրենսդրության, այնպես էլ տնտեսության կառավարման արդիականացում: Դա հնարավոր է, երբ տնտեսության կառուցվածքային, ինստիտուցիոնալ և վարքագծային բարեփոխումները իրականացվում են բացառապես բարելավված սահմանադրաիրավական միջավայրի պայմաններում, որոնցում ընթանում է հասարակության կենսագործունեությունը: Այս գործընթացում վճռորոշ է դառնալու *տնտեսական հարաբերությունների սահմանադրականացումը*՝ քայլերի ճշգրիտ հաշվարկված հերթականությամբ և դրանց ներդաշնակեցմամբ: Այն վերաբերելու է դատաիրավական համակարգին, տնտեսության թվային փոխակերպմանը, քաղաքացիների ու տնտեսավարողների վարքագծային փոփոխություններին, «պայմանագրային տնտեսության» զարգացմանը, հանրային կառավարման կատարելագործմանը և այլն: Կոռուպցիոն ռիսկերի կառավարումն ու տնտեսությունում ստվերի կրճատումը կդառնան նշված հիմնարար լուծումների սոսկ հետևանք:

2. Տնտեսական հեղափոխության գործարկումը գիտելիքահենք կառավարմամբ պետք է ուղեկցվի ***տնտեսական հավասարակշռության*** պահպանմամբ: Ընդ որում, երկու հիմնական՝ աշխատանքի և կապիտալի շուկաներում, ինչպես նաև ապրանքների ու ծառայությունների արտադրության ոլորտում տնտեսական հավասարակշռություն ապահովելու համար պետք է ստեղծվեն բավարար պայմաններ[15]: Հավասարակշռության իրավիճակը համապատասխան մոդելի առանձին հատվածներում պահանջում է նախ և առաջ ներքին հավասարակշռության առկայություն, որը աշխատանքի և կապիտալի շուկաներում, պայմանավորված առաջարկի ու պահանջարկի գործոններով, հնարավոր է ապահովել գծապատկեր 2-ում նկարագրված միջավայրով, գործիքակազմով ու ենթակառուցվածքներով:

Ապրանքների ու ծառայությունների արտադրության ոլորտում առաջարկն իր որակական ու քանակական չափումներով էապես պայ-

---

[15] Տե՛ս **Столерю Л.** Равновесие и экономический рост. М.: «Статистика», 1974: Նկատենք, որ ներկայումս խեղված են հավասարակշիռ վիճակները: Դիսբալանսը ծածկվում է աշխատանքի շուկայի պարագայում քողարկված և թաքնված զբաղվածությամբ, փողի շուկայում՝ թանկ փողի առաջարկով, որը կապիտալի շուկայի գործառնման ձևախեղված պատկերն է և չի կարող նպաստել հավասարակշռությանը:

մանավորված է տնտեսության կառուցվածքով: Տնտեսությունում ցանկալի կառուցվածքային տեղաշարժերի հարցում զգալի դերակատարում կարող է ունենալ կապիտալի շուկան միայն մի դեպքում, երբ դրանում վերաբաշխվում է ազատ կապիտալը, որով ձևավորվում են ֆինանսական տարաբնույթ ակտիվները:

Գծապատկեր 2

Ապրանքների և ծառայությունների, աշխատանքի և կապիտալի փոխգործակցումը



Կապիտալի շուկայում երկար փողերի շրջանառություն հնարավոր է միայն արժեթղթերի շուկայի լիակատար գործարկման պայմաններում: Սակայն Հայաստանում այն դատապարտված է գրեթե անգործության, քանզի ընդամենը երկու տասնյակից քիչ ավելի արժեթղթեր թողարկող ընկերությունները (2019 թ. ՀՀ-ում գործել են 896 բաց և 3 հազար 271 փակ բաժնետիրական ընկերություններ) չեն կարող արժեթղթերի շուկայում եղանակ ստեղծել: Հիմնախնդիրը, որը ըստ էության հանգեցնում է նաև արժեթղթերի երկրորդային շուկայի բացակայությանը, կարևորվում է նրանով, որ պետական կառավարման համակարգն այդուհանդերձ խորամուխ չի լինում, թե, ի վերջո, տնտեսավա-

ղողները (նաև հայտնի) ինչու բաժնետոմսեր չեն թողարկում: Անշուշտ կարող են լինել տարբեր պատասխաններ, սակայն իրականում ստվերային գործունեության շրջանակների ընդլայնման կամ պահպանման, սեփականության կենտրոնացման և նմանատիպ այլ նպատակներով է դա արվում: Նման իրավիճակը պահանջում է մասնագիտական քննարկումներ՝ բացահայտելու դրա խորքային պատճառները: Այլապես սոսկ վկայակոչումը, որ Հայաստանի ֆոնդային բորսայում 2018 թ. ընդամենը 88,9 մլն դրամի 2393 գործարքներ են կատարվել, արդեն իսկ վկայում է նման բաժնետիրացմամբ մասշտաբային խնդիրների լուծման անհեռանկարայնության մասին: (Հայաստանի ֆոնդային բորսայում բաժնետոմսերի տեսակարար կշիռը եղել է 2,68 տոկոս, կորպորատիվը՝ 34,2%, պետականը՝ 63,2%):

Այսպիսով, տնտեսական հեղափոխության իրագործման ընթացքը կխթանվի, եթե իշխանությունները երկարատև ու կայուն տնտեսական զարգացման նպատակով կիրառեն այնպիսի լուծումներ, որոնք մեծապես կնպաստեն ***տնտեսական հարաբերությունների սահմանադրականացմանն ու տնտեսական հավասարակշռության*** ապահովմանը: Տնտեսական հեղափոխության անցումային (տրանզիտիվ) փուլի՝ մինչև 3 տարի ժամանակահատվածում գործերը բարեհաջող կընթանան, եթե չհապաղենք հատկապես ինստիտուցիոնալ ռեֆորմների անբավարար գործարկման առումով: Այն առաջին հերթին վերաբերում է տնտեսավարող սուբյեկտների ու մարդկանց վարքագծային շեղումների հաղթահարմանը, հեղափոխության դիտակետից՝ «չաշխատող» ինստիտուտների փոխլրացմանը: Նշված խնդիրների լուծմանը կարող է ծառայել երկրի կառավարման ու կարգավորման համակարգում ներկառուցված (встроенные) օպորտունիստական ոչ ֆորմալ ինստիտուտների գործառնման վերացումը: Ինստիտուտների գործառույթների խաթարման (դիսֆունկցիայի) պարագայում, իսկ դա առաջանում է այն դեպքերում, երբ կառավարման մեխանիզմների փոփոխման գործընթացը բավարար դինամիկ և համարժեք չէ, ներկառուցված ինստիտուտները հանդես են գալիս որպես յուրօրինակ փոխարինիչներ[16], որոնք պետք է վերացվեն: Ոչ ֆորմալ օպորտունիստական ինստիտուտների վերացման հնարավոր ուղիների բացահայտումը (որին նվիրված է հոդված աշխատանքը) կնպաստի «ինստիտուտների դիսֆունկցիայի», «պետության զավթման» երևույթների առնվազն մեղմմանը:

Բանալի բառեր – *պետություն, տնտեսական հեղափոխություն, սահմանադրականություն, երկրների բարեկեցություն, ինստիտուտների ընկալում, ստվերեն ներդրումային ֆոնդ, աշխատանքի շուկա, կապիտալի շուկա, պատասխանատվություն, վարք, թվային տնտեսություն, պայմանագրային տնտեսություն*

---

[16] Տե՛ս **Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան**, Ներկառուցված ոչ ֆորմալ ինստիտուտների գործառնումը սահմանադրականության համատեքստում: Եր., Economica, 2019, № 1:

ГАЙК САРГСЯН – ***Идеологические основы экономической революции в Республике Армения.*** **–** Сущность экономической революции – создать необходимые условия для долгосрочного и устойчивого развития экономики с наибольшими темпами роста ВВП. Для функционирования экономики страны достаточно глубокого технологического и структурного реформирования. В статье рассматривается круг проблем, предопределяющих оптимальную трансформацию рыночного хозяйства.

Для развития социально-экономической системы предлагается коренным образом изменить экономическую политику посредством эффективного развития и сбалансированного взаимодействия рынков товаров и услуг, труда и капитала. Особо акцентируются проблемы, которые не решены из-за неудовлетворительных институциональных реформ. Выявляются взаимосвязи конституционализма (с определением уровня дефицита), институционального развития, поведенческих предпосылок, с одной стороны, и экономического развития – с другой.

Ключевые слова: *государство, экономическая революция, конституционализм, благосостояние стран, восприятие институтов, суверенный инвестиционный фонд, рынок труда, рынок капитала, ответственность, поведение, цифровая экономика, контрактная экономика*

HAYK SARGSYAN – ***Ideological Basis of Economic Revolution in the Republic of Armenia.*** **–** The essence of the economic revolution is perceived as the creation of required conditions for long-term and sustainable development of economics with the highest possible speed of GDP growth.

The sufficient condition of the functioning of the RA economy is the deep technological and structural reformation. A range of issues affecting the agenda of the optimal transformation of the market economy in the Republic of Armenia is being addressed.

It is offered to radically change the economic policies for the development of the socio-economic system through the effective development and balanced interrelation between the markets of goods and services, labour, and capital markets. There is a special focus on issues that have not been resolved completely because of poor institutional reforms.

Through empirical research, this work reveals interrelations between constitutionalism (with the deficit assessment), institutional development, behavioural preconditions, and human perception of institutes on the one hand and economic development on the other.

Key Words: *state, economic revolution, constitutionalizm, welfare of countries, perception of institutes, sovereign investment fund, labor market, capital market, responsibility, behavior, digital economics, contract economics*

Ներկայացվել է՝ 04.02.2020
Գրախոսվել է՝ 19.02.2020
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020